ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » 2019թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Խ-090-04.04.2019-ՏՀ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի մայիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 472 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱ-ՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Խ-090-04.04.2019-ՏՀ-011/0) ՎԵՐԱ-ԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում (այսուհետ՝ օրենք) լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով նախատեսվում է օրենքի անցումային դրույթներում նախատեսել կարգավորում, որի համաձայն՝ ***օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 17-րդ կետի 1-ին ենթակետի՝ մինչև 2018 թվականի հունիսի 27-ը գործող խմբագրությանը համապատասխան տրված լիցենզիաների գործողությունը շարունակվելու է մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը, և մինչ այդ ժամկետը լրանալն ստացված լիցենզիաների հիման վրա քաղաքաշինության բնագավառում իրականացված գործունեությունը համարվելու է օրինական, եթե չի խախտում այլ օրենքի պահանջները***:

Օրենքի նախագծին կից ներկայացված հիմնավորման համաձայն՝ «նախագծի ընդունման արդյունքում նախկին կարգով լիցենզավորված անձանց կողմից վճարված գումարները կծառայեն իրենց նպատակին, կապահովվի նոր կարգավորման ժամկետային սահմանափակման վերաբերյալ պատշաճ ծանուցումը բոլոր պատկան մարմիններին և շահագրգիռ կազմակերպություններին, որի արդյունքում ՀՕ-236 օրենքով ուժը կորցրած ճանաչված լիցենզիաների հիման վրա իրականացված՝ լիցենզավորման ենթակա գործունեությունը չի համարվի իրավախախտում, և նախկին կարգով լիցենզավորված անձինք հնարավորություն և բավարար ժամկետ կունենան դիմելու և ստանալու նոր արտոնագրեր»:

Շարադրվածի համատեքստում անհրաժեշտ ենք համարում դիտարկել հետևյալ իրավական կարգավորումները: Այսպես՝

«Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» 2017 թվականի դեկտեմբերի 6-ի ՀՕ-236-Ն օրենքով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման

ենթակա գործունեության տեսակների ցանկը սահմանող օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 17-րդ կետի 1-ին ենթակետը (քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակում) շարադրվել է նոր խմբագրությամբ, արդյունքում՝ նախկին «Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն» գործունեության տեսակի փոխարեն նախատեսվել է լիցենզավորման ենթակա երկու առանձին գործունեության տեսակ՝ «Քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակում» և «Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննություն»:

Նույն օրենքի անցումային դրույթներում միևնույն ժամանակ նախատեսվել է կարգավորում, որի համաձայն՝ «***մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը «Լիցենզավորման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 17-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան տրված լիցենզիաները շարունակում են մնալ ուժի մեջ՝ մինչև «Ճարտարապետական գործունեության մասին» օրենքով սահմանված կարգով «Հայաստանի Հանրապետության ճարտարապետների պալատ» ինքնակարգավորվող ոչ առևտրային կազմակերպության պետական գրանցման օրվան հաջորդող վեցերորդ ամիսը լրանալը: Նախկինում տրված լիցենզիաների գործողությունը դադարում է սույն հոդվածով սահմանված ժամկետի ավարտին հաջորդող օրվանից»***:

Նշված օրենքն ուժի մեջ է մտել 2018 թվականի հունիսի 27-ին, իսկ մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը տրված լիցենզիաների ժամկետը, ըստ նախագծին կից ներկայացված հիմնավորման, ավարտվել է 2018 թվականի նոյեմբերի 16-ին՝ «Հայաստանի Հանրապետության ճարտարապետների պալատ» ինքնակարգավորվող ոչ առևտրային կազմակերպության պետական գրանցման օրվան (2018 թվականի մայիսի 16) հաջորդող վեցերորդ ամիսը լրանալուն հաջորդող օրանից:

Բացի դրանից, 2017 թվականի դեկտեմբերի 6-ին ընդունվել և 2018 թվականի հունվարի 6-ին ուժի մեջ է մտել «Ճարտարապետական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որի անցումային դրույթները կարգավորող 24-րդ հոդվածի 2-րդ

մասում սահմանվել է, որ ***Հայաստանի Հանրապետության կառավարությունը սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում ապահովում է քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման գործունեության լիցենզավորման կարգի համապատասխանությունը սույն օրենքով սահմանված պահանջներին:***

Հարկ է նշել նաև, որ օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված է կարգավորում, որի համաձայն՝ ***մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան տրված լիցենզիաները գործում են մինչև լիցենզիաների գործողության ժամկետի ավարտը:***

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ***լիցենզավորման պայմանների ու պահանջների փոփոխության դեպքում նախկինում տրված լիցենզիաները պահպանում են իրենց իրավական ուժը՝ սույն օրենքով նախատեսված ժամկետներով:***

Թե գործող կարգավորումներին և թե նախագծերով առաջարկվող փոփոխություններին հարկ ենք համարում անդրադառնալ հետևյալ սահմանադրաիրավական կարգավորումների լույսի ներքո: Այսպես.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է **օրենքների** ***և այլ իրավական ակտերի հետադարձ ուժը***, որի համաձայն՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտեր հետադարձ ուժ չունեն:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 73-րդ հոդվածին համապատասխան՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտեր հետադարձ ուժ չունեն, իսկ անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտեր հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով:

Անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքներին և այլ իրավական ակտերին հետադարձ ուժ տալու անթույլատրելիության վերաբերյալ իր դիրքորոշումն է հայտնել Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը: Այսպես.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն իր 2012 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ ՍԴՈ-1061 որոշման մեջ արձանագրել է. «8. Սահմանադրական դատարանն իր՝ ՍԴՈ-649, ՍԴՈ-723, ՍԴՈ-758, ՍԴՈ-881, ՍԴՈ-1000 որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումներով բազմիցս արձանագրել է անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքին և այլ իրավական ակտերի հետադարձ ուժ հաղորդելու անթույլատրելիությունը՝ կարևորելով, որ «… ***անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելման սկզբունքը՝ իրավական անվտանգության սկզբունքի հետ մեկտեղ, կոչված է ապահովելու լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքը***», և, որ անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելքը «…***հանդիսանում է պետական իշխանության նկատմամբ վստահության և իրավական պետության սկզբունքների կարևոր բաղադրատարրերից մեկը: Այդ սկզբունքը միաժամանակ հանդես է գալիս որպես իրավական որոշակիության սկզբունքի ապահովման կարևոր երաշխիք***: Օրենքի հետադարձ ուժի մերժման սկզբունքից բխում է այն արգելքը, որի համաձայն՝ ***անթույլատրելի է այն իրավունքների սահմանափակումը կամ վերացումը, որոնք ամրագրվել են նախկինում գործող նորմերի հիման վրա***: Նման պարտավորություն է ստանձնել նաև Հայաստանի Հանրապետությունը՝ մի շարք միջազգային պայմանագրերով:»:

Հարցը դիտարկելով իրավական որոշակիության տեսանկյունից՝ անհրաժեշտ ենք համարում արձանագրել, որ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը, բազմիցս անդրադարնալով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 79-րդ հոդվածում ամրագրված որոշակիության սկզբունքին, գտել է, որ ***օրենքները պետք է լինեն այնպիսին, որպեսզի համապատասխան հարաբերությունների մասնակիցները ողջամիտ սահմաններում՝ վիճակի լինեն կանխատեսել իրենց վարքագծի հետևանքները և վստահ***

լինեն՝ ինչպես իրենց պաշտոնապես ճանաչված կարգավիճակի անփոփոխելիության համար, այնպես էլ՝ ձեռք բերված իրավունքների և պարտավորությունների հարցում(ՍԴՈ-1142, ՍԴՈ-1270):

Օրենքի և իրավական որոշակիության սկզբունքի հարաբերակցության վերաբերյալ իր մի շարք որոշումներում, հղում կատարելով նաև ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքին, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն իր 2006 թվականի ապրիլի 18-ի ՍԴՈ–630 որոշմամբ իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «...***օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար ապրիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համապատեղելու իր վարքագիծը:***»:

Նշված հոդվածների և Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների բովանդակային վերլուծությունից պարզ է դառնում, որ թե գործող՝ «Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» 2017 թվականի դեկտեմբերի 6-ի ՀՕ-236-Ն օրենքի 2-րդ հոդվածի կարգավորումները, թե նախագծով առաջարկվող փոփոխությունները կարող են խնդրահարույց լինել մինչև «Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» 2017 թվականի դեկտեմբերի 6-ի ՀՕ-236-Ն օրենքն ուժի մեջ մտնելը «Լիցենզավորման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 17-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան լիցենզավորված անձանց՝ նախկինում գործող նորմերի հիման վրա և սահմանված ժամկետներով լիցենզիա ստանալու իրավունքի տեսանկյունից, այդ թվում՝ ***լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի ապահովման առումով***՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մինչև օրենքն ուժի մեջ մտնելը նշված ենթակետին համապատասխան լիցենզիա ստացած և գործունեություն

ծավալող իրավաբանական անձը հայտնվում է փակուղիում, և պարզ չէ, թե ինչպես պետք է վարվի, օրինակ, երկարաժամկետ ծրագրերի իրականացման գործում ներգրավված լինելու դեպքում:

Այս առումով գտնում ենք, որ լիցենզավորման պայմանների ու պահանջների յուրաքանչյուր փոփոխության դեպքում պետք է ողջամիտ և իրատեսական ժամկետ սահմանվի նախկինում գործող նորմերի հիման վրա և սահմանված ժամկետներով լիցենզիա ստացած անձանց համար՝ իրենց տրամադրված լիցենզիաները վերաձևակերպելու, նոր պայմաններին ու պահանջներին համապատասխանեցնելու և իրենց վարքագծի հետևանքները կանխատեսելու նպատակով:

Նույնաբնույթ խնդիր է առաջացել նաև կրթության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների ցանկը նոր խմբագրությամբ շարադրելիս, երբ նախկին «*Բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի իրականացում*» գործունեության տեսակի փոխարեն նախատեսվել է լիցենզավորման ենթակա երկու առանձին գործունեության տեսակ՝ «*Բակալավրի կրթական ծրագրի իրականացում*» և «*Մագիստրոսի կրթական ծրագրի իրականացում*», և տվյալ դեպքում «Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» 2011 թվականի դեկտեմբերի 8-ի ՀՕ-349-Ն օրենքի անցումային դրույթներում նախատեսվել է կարգավորում, որի համաձայն՝

«1. *Կրթական ծրագրերի իրականացման համար մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը տրված* ***այն լիցենզիաները, որոնց համար սույն օրենքով առաջանում են նոր պայմաններ և պահանջներ*** *(այդ թվում՝ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերով, բացառությամբ բժշկական բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրի, նախկինում տրված լիցենզիաները),* ***սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 6-ամսյա ժամկետում ենթակա են վերաձևակերպման****: Նշված ժամկետում լիցենզիաները չվերաձևակերպելու դեպքում կրթության պետական կառավարման լիազոր մարմինը դադարեցնում է լիցենզիաների գործողությունը:*

2. Սույն հոդվածի 1-ին մասով նշված ժամկետում լիցենզիաների վերաձևա- կերպման դեպքում «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով լիցենզիայի վերաձևակերպման համար սահմանված պետական տուրքը չի գանձվում։»։

Հարկավոր է նշել, որ խնդրահարույց է նաև օրենքի նախագծով նախատեսված կարգավորումը, որի համաձայն՝ «մինչ 2018 թվականի հունիսի 27-ը գործող խմբագրությանը համապատասխան ստացված լիցենզիաների հիման վրա քաղաքաշինության բնագավառում իրականացված ***գործունեությունը համարվելու է օրինական***, եթե չի խախտում այլ օրենքի պահանջները»՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ քաղաքաշինության բնագավառում կարող են կատարվել նաև այլ բնույթի վարչական իրավախախտումներ, որոնք օրենքի նախագծի կարգավորման համատեքստում օրինական համարվել չեն կարող։ Հետևաբար, առաջարկում ենք օրենքի նախագծի նշված կարգավորումը ձևակերպել այնպես, որպեսզի ոչ թե նշված գործունեությունը համարվի օրինական, այլ մինչև այդ ժամկետը լրանալն ստացված լիցենզիաների հիման վրա քաղաքաշինության բնագավառում իրականացված գործունեության համար վարչական իրավախախտում կատարած անձինք չենթարկվեն վարչական պատասխանատվության։

Բացի դրանից, առաջարկում ենք քննարկման առարկա դարձնել նաև այն, որ օրենքի նախագծով նախատեսվում է փոփոխություններ կատարել օրենքի 43-րդ հոդվածում, որը կարգավորում է 2001 թվականի մայիսի 30-ի խմբագրությամբ օրենքի անցումային դրույթները, մինչդեռ օրենքի նախագծով նախատեսված կարգավորումները վերաբերում են «Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» 2017 թվականի դեկտեմբերի 6-ի ՀՕ-236-Ն օրենքի անցումային դրույթներին։

Միաժամանակ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարությանը ենթական քաղաքաշինության կոմիտեի կողմից մշակվել և ներկայումս շրջանառվում է կարգավորմանն ուղղված օրենսդրական նախաձեռնությունների փաթեթ, որն առաջիկայում Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն արժանալուց

հետո սահմանված կարգով կներկայացվի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 մայիսի 2019 թվականի N 472 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՔԵԿՈՒՅՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության կառավարությանը ենթակա քաղաքաշինության կոմիտեի նախագահ Վահագն Վերմիշյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Խ-090-04.04.2019-ՏՀ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. մայիսի 2
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի 48-րդ հոդվածը լրացնել նոր 2.1-ին մասով.

«2.1. Սույն օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 17-րդ կետի 1-ին ենթակետի՝ մինչև 2018 թվականի հունիսի 27-ը գործող խմբագրությանը համապատասխան տրված լիցենզիաների գործողությունը շարունակվում է մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը: Մինչ այդ ժամկետը լրանալը ստացված լիցենզիաների հիման վրա քաղաքաշինության բնագավառում իրականացված գործունեությունը համարվում է օրինական, եթե չի խախտում այլ օրենքի պահանջները:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: Սույն օրենքով նախատեսված ժամկետային սահմանափակման հետ կապված ծանուցումներն ապահովում է քաղաքաշինության բնագավառի լիցենզավորող մարմինը՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում 2017 թվականի դեկտեմբերի 06-ի ՀՕ-236 օրենքով փոփոխություններ են կատարվել քաղաքաշինության բնագավառում տրվող լիցենզիաների մասով: Անցումային դրույթներով նախատեսվել է հետևյալը. «*Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 17-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան տրված լիցենզիաները շարունակում են մնալ ուժի մեջ մինչև «Ճարտարապետական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով «Հայաստանի Հանրապետության ճարտարապետների պալատ» ինքնակարգավորվող ոչ առևտրային կազմակերպության պետական գրանցման օրվան հաջորդող վեցերորդ ամիսը լրանալը: Նախկինում տրված լիցենզիաների գործողությունը դադարում է սույն հոդվածով սահմանված ժամկետի ավարտին հաջորդող օրվանից:*»:

Համաձայն Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրի՝ օրենքն ուժի մեջ է մտել 2018 թվականի հունիսի 27-ին, սակայն դրանով նախատեսված ժամկետային սահմանափակման մասին լիազոր մարմինը (Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն) պատշաճ ծանուցումներ չի ապահովել:

Մինչդեռ, նույն 2017 թվականի դեկտեմբերի 06-ին ընդունվել է «Ճարտարապետական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որի 24-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանմամբ՝ *Հայաստանի Հանրապետության կառավարությունը սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, ապահովում է քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման գործունեության լիցենզավորման կարգի համապատասխանությունը սույն օրենքով սահմանված պահանջներին:*

Այսպիսով, մի կողմից նախկին օրենքի հիման վրա տրված լիցենզիաներով աշխատող անձիք կատարել են *de jure* իրավախախտում, քանի որ իրականացրել են լիցենզավորման ենթակա գործունեություն՝ առանց համապատասխան լիցենզիայի (լիցենզիայի ժամկետն ավարտվել է քննարկման առարկա օրենքով սահմանված ժամկետում՝ 2018 թվականի նոյեմբերի 16-ին, երբ լրացել է «Հայաստանի Հանրապետության ճարտարապետների պալատ» ինքնակարգավորվող ոչ առևտրային կազմակերպության պետական գրանցման օրվան (2018 թվականի մայիսի 16) հաջորդող վեցերորդ ամիսը):

Ծանուցված չլինելով՝ նրանք նաև կատարել են համապատասխան վճարներ, շատերը՝ նախապես, մի քանի ամիս առաջ, որոնք առևտրային բանկերն ընդունել են՝ ևս ծանուցված չլինելու պատճառով: Փոխանցված գումարներն այժմ չեն վերադարձվում, ոչ էլ հաշվանցվում են որևէ այլ նպատակային վճարի համար:

Տեղեկացում չի ապահովվել նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների մասով:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասի՝ *անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:* Մինչդեռ, 2017 թվականի ՀՕ-236 թվակիր օրենքով անժամկետ տրված լիցենզիաների գործողությունը փաստորեն դադարեցվել է, ինչը նշանակում է, որ հետադարձ ուժ է տրվել անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքին: Այսինքն, ՀՕ-236 օրենքը հետադարձ ուժի մասով հակասում է Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներին:

Ներկայացված նախագծով առաջարկվող կարգավորմամբ հնարավորություն կտրվի երկարացնել խնդրո առարկա օրենքով սահմանված ժամկետը, ինչն իր հերթին թույլ կտա, որպեսզի՝

- նախկին կարգով լիցենզավորված անձանց կողմից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ի համար վճարված գումարները ծառայեն իրենց նպատակին,
- ապահովվի նոր կարգավորման ժամկետային սահմանափակման վերաբերյալ պատշաճ ծանուցումը բոլոր պատկան մարմիններին և շահագրգիռ կազմակերպություններին,
- ՀՕ-236 օրենքով ուժը կորցրած ճանաչված լիցենզիաների հիման վրա իրականացված լիցենզավորման ենթակա գործունեությունը չի համարվի իրավախախտում,
- նախկին կարգով լիցենզավորված անձիք հնարավորություն և բավարար ժամկետ կունենան դիմելու և ստանալու նոր արտոնագրեր: